## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2020թ. N 75-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշմամբ հաստատված կարգը և սոցիալական աջակցության հանձնաժողովի առաջարկությունը՝ որոշում եմ.

1.Սոցիալական պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների իրականացման նպատակով համայնքի 2020 թվականի բյուջեից տրամադրել 180000 (մեկ հարյուր ութսուն հազար) դրամ՝ Բյուրեղավան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու համար՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանին՝ կատարել սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 28
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 մարտի 2020թ. N 76-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 325-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Վահան Մարտիկի Մկրտչյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2019 թվականի օգոստոսի 15-ի «Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) տալու մասին» N 325-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)որոշման նախաբանից հանել «Նարեկ Վահանի Մկրտչյանի,» բառերը.

2)որոշման 1-ին և 2-րդ կետերից հանել «Նարեկ Վահանի Մկրտչյանին,» բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. մարտի 02
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 մարտի 2020թ. N 77-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ՝ ***որոշում եմ.***

1.Աբովյանի Նունուս այգետարածքի թիվ 2 տեղամասի թիվ 95 (ծածկագիր՝ 07-051-0124-0056) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝ Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նունուս Ուրց թաղամաս 2-րդ փողոց 95:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. մարտի 02
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 մարտի 2020թ. N 78-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ ու 49-րդ կետերի և հիմք ընդունելով «Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արամ Քոչարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.«Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Նուռնուսի համայնք, Երևան Սևան մայրուղու (վկայական 2415652, ծածկագիր 07-051-0202-0018) անշարժ գույքին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Երևան Սևան մայրուղի 30:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. մարտի 02
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մարտի 2020թ. N 79-Ա

## ԱԼՎԱՐԴ ԲԱՂԻԿՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Ալվարդ Բաղիկյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ *որոշում եմ*

1.Ալվարդ Բաղիկյան անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար 43005944) տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց, 26 շենքի դիմաց հասցեում գտնվող 33 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում 2020 թվականի հունվարի 01-ից մինչև հունիսի 30-ի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. մարտի 03
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2020թ. N 80-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ ու 55-րդ կետերի և հիմք ընդունելով թիվ 2420011 սեփականության վկայականը, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրն ու Շուրիկ Կամոյի Մակարյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Կոտայքի մարզ Նուռնուսի այգետարածք թիվ 5 հասցեի (ծածկագիր՝ 07-051-0138-0011) անշարժ գույքը վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 3-րդ փողոց 5:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. մարտի 03
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մարտի 2020թ. N 81-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 38 ՇԵՆՔԻ ԹԻՎ 6 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Միխայիլ Ալեքսանդրի Ստեփանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Միխայիլ Ալեքսանդրի Ստեփանյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 38 շենքի թիվ 6 բնակարանի (վկայական՝ 271174, տրված 2010 թվականի հուլիսի 02-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 38 շենք 6 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. մարտի 03
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2020թ. N 82-Ա

## ԱՐՄԵՆ ՊՌԱԶՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Արմեն Պռազյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ ***որոշում եմ.***

1.Արմեն Պռազյան անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար 43083924) տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց, 27/90 հասցեում գտնվող 48 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2020 թվականի հունվարի 01-ից մինչև հունիսի 30-ի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. մարտի 04
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2020թ. N 83-Ա

## ԱՐՏՅՈՄ ԱՎԱԳՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Արտյոմ Ավագյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ ***որոշում եմ.***

1.Արտյոմ Ավագյան անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար 43049696) տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց, 31 շենքի դիմաց հասցեում գտնվող 21 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2020 թվականի հունվարի 01-ից մինչև հունիսի 30-ի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. մարտի 04
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2020թ. N 84-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 33 ՇԵՆՔԻ ԹԻՎ 24 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Ալվինա Մանվելի Բալոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Ալվինա Մանվելի Բալոյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 33 շենքի թիվ 24 բնակարանի (վկայական՝ 0296326, տրված 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 33 շենք 24 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. մարտի 05
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2020թ. N 85-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ ու 49-րդ կետերի և հիմք ընդունելով Մուրադ Ռաֆիկի Հովհաննիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Մուրադ Ռաֆիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Ջրաբեր (վկայական 1785811, ծածկագիր 07-055-0101-0003) հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Ջրաբեր 4-րդ փողոց 2:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. մարտի 05
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2020թ. N 86-Ա

### ԱՆՈՒՇ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ և $219^{1}$-րդ հոդվածների և հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքապետարանի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող աշխատանքային խմբի արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Անուշ Ջեմլակի Պետրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի, Բյուրեղավան քաղաքի Սարալանջ թաղամաս 4-րդ փողոց թիվ 31 հասցեի հողամասում (ծածկագիր՝ 07-003-0043-0024, տրված՝ 06 հուլիսի 2005 թվականին) ինքնակամ շինություն կառուցելու համար:

2.Քաղաքացի Անուշ Ջեմլակի Պետրոսյանի նկատմամբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով՝ 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ Անուշ Ջեմլակի Պետրոսյանի կողմից տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը՝նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202106 հաշվեհամարին:

4.Սույն որշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Բյուրեղավան համայնքի ղեկավարին կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա ընդունման մասին Անուշ Ջեմլակի Պետրոսյանին սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. մարտի 05
ք. Բյուրեղավան

**Հավելված**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 28-ի № 75-Ա որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

| ՀՀ | Ազգանուն, անուն, հայրանուն | Հասցեն | Գումարի չափը (դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Բաղդասարյան Իրա Իվանի | ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց 14 շենք 23 բնակարան | 30000 |
| 2 | Սարգսյան Մանուշակ Սարգսի | ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց 12 շենք 1 բնակարան | 30000 |
| 3 | Խալաթյան Օվսաննա Ռազմիկի | ք. Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 4 շենք 28 բնակարան | 30000 |
| 4 | Հովհաննիսյան Հակոբ Վարդգեսի | ք. Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 10 շենք 16 բնակարան | 10000 |
| 5 | Դանիելյան Ժենյա Յապոնի | ք. Բյուրեղավան 2 – րդ փողոց 49 շենք 6 բնակարան | 10000 |
| 6 | Սոնայան Սեյրան Գրիգորի | ք. Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 6 շենք 17 բնակարան | 30000 |
| 7 | Հովակիմյան Սուսան Իվանի | ք. Բյուրեղավան Օղակաձև փողոց 4-րդ հանրակացարան 54/55բնակարան | 10000 |
| 8 | Գևորգյան Ռիփսիկ Սարիբեկի | ք. Բյուրեղավան Օղակաձև փողոց 3 շենք 10 բնակարան | 10000 |
| 9 | Մակինյան Տանյա Հովհաննեսի | ք. Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 3 շարք 5 տուն | 10000 |
| 10 | Առուստամյան Վիկտորյա Շմավոնի | ք. Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 20 շենք 33 բնակարան | 10000 |
| Ընդամենը | | | 180000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(մարզը, համայնքը)

# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
## (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 9 15 օգոստոսի 2019թ.

Օբյեկտ 1 (մեկ) հարկանի բնակելի նպատակային նշանակության բնակելի տուն կառուցելու
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

____
(համալիրի բնորոշումը, հզորությունը)

____ նախագծային փաստաթղթերի մշակման համար:
«Անհատական նախագիծ», (II կատեգորիա).
(բարդության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 9-րդ փողոց 4 (ծածկագիր՝ 07-051-0002-0035) հասցեի բնակելի կառուցապատման հողամաս
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Վահան Մարտիկի Միրզոյան, Նարինե Մարտիկի Միրզոյան, Աղնիվ Պետրոսի Միրզոյան, Մարտիկ Հարությունի Միրզոյան, Հարություն Մարտիկի Միրզոյան (գյուղ Նուռնուս գլխավոր փողոց 6 փակուղի 2 տան բնակիչներ), հեռ.077116516
(բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը սեփականության վկայական համար 729801 տրված 08.07.2003թ.-ին
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված
կառուցապատման հայտ, հողամասի հատակագիծ օբյեկտի առաջարկվող տեղադրմամբ, էսքիզային նախագիծ,
կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը ____
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

### ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական պատկերումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է — Բնակավայրերի նպատակային նշանակության , բնակելի կառուցապատման տարածք.
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում,դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը — ծածկագիր 07-051-0002-0035, 0.116հա. հող

| Կոորդինատներ | | |
|---|---|---|
| | X | Y |
| 1 | [illegible] | [illegible] |
| 2 | [illegible] | [illegible] |
| 3 | [illegible] | [illegible] |
| 4 | [illegible] | [illegible] |

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը — շինություններ չկան
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները — համայնքային նշանակության ճանապարհ .
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի-մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության — հարակից տարածքով անցնող ստորգետնյա մալուխ, ջրագիծ, կոյուղագիծ, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր, գազամատակարարման համակարգ

համակարգեր)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր — համայնքային սեփականության հող, ճանապարհ, (հարևաններ)

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) — ---------------

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ — նախագիծը մշակել համաձայն տրված առաջադրանքի

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող անկոչի սխեմայով՝ Մ 1:500)*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ — ընկալվում է ՀՀ գործող նորմերին համապատասխան՝ ըստ միջավայրի պայմանների, հաշվի առնել միջավայրի քաղաքաշինական առանձնահատկությունները, հատակագծային լուծումները ըստ պատվիրատուի առաջադրանքի, տանիքի գույն՝ RGB RAL 159-51-33 3016 49/31980՝ ըստ միասնական պահանջներ սահմանող ուղեցույցի, կառուցվող նախագծի վերաբերյալ

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, ինչպես քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից՝ առաջադրվում են ծավալատարածական լուծումների, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) — *Ապահովել փողոցի կառուցապատման գիծը*

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) — ------

9.3. բույլատրելի բարձրությունը (մետր) — սահմանային հարկայնության բարձրությունը փոխադանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն) H=4.9մ

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) — 0.054-0.1

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անշրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)) — 5.4-10%

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)) — 94.6%

9.7. այլ պահանջներ — տարածքում տեղադրել ինֆորմացիոն վահանակ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների — ----------

հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները ________ -------- ________

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

համաձայնեցնել իրավասու կազմակերպությունների հետ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

Կցվում է «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերություն

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում Կցվում է «ՀԷՑ» ՓԲԸ «ԽՄՄ» տնօրինության «Նաիրի» էլեկտրական ցանցեր

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում Կցվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Աբովյանի ԳԳՄ

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

Կցվում է ________

(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ ________

12.6. աղբահանություն

Կնքել համապատասխան պայմանագիր աղբահանություն կազմակերպող իրավասու կազմակերպության հետ

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

«Բյուրեղավան կանաչապատում և բարեկարգում» ՀՈԱԿ կազմակերպել ջրահեռացում

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

ապահովել հարակից տարածքի մաքրությունը, կանաչապատումը, բարեկարգումը

(ավտոկայանատեղերի պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, լուսավորում և այլն)

15. Շինարարական նյութեր

Քար.Երկաթ/բետոն. տուֆ, բազալտ, կոպտատաշ քարե շար, մետաղ, ապակի, փայտ, ավազ, ցեմենտ և այլն ըստ համաձայնեցված նախագծի

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները ճակատների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

շինարարության ընթացքում ցանկապատել տարածքը և ստեղծել անհրաժեշտ այլ պաշտպանական միջոցներ

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ ________

19. Շրջակա միջավայրի պահպանում

չիրականացնել վնասակար միջոցառումներ, որը կթողնի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, ըստ գործող նորմերի

(շրջակա միջավայրը վնասակար ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Ճանապարհի երթևեկելի մասում չստեղծել երթևեկության խոչընդոտ հանգեցնող պայմաններ

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

*«Աշխատանքային նախագիծ» , 12 (տասներկու) ամիս*

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

*Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան*

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի նախաձեռնությամբ՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

______________________________

(Իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

*ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների համաձայն*

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

*նախագիծը համաձայնեցնել Բյուրեղավանի համայնքապետարանի հետ և ինժեներական ենթակառուցվածքի տեխնիկական անվտանգության ոլորտում պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ՝ մինչև նախագծային աշխատանքների սկիզբը*

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

______________________________

27. Այլ պայմաններ

______________________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.

Ն. ԴԱՆԻԵԼՅԱՆ
հեռ. 0222 6 52 03